ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

08.10.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 769-Ա

‹‹ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 7-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ›› ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՎՈԼԵՅԲՈԼ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՊՐՈՑԻ ՏՂԱՆԵՐԻ ԹԻՄԻ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 46-րդ հոդվածով, 57-րդ հոդվածի 2-րդ մասոց, հիմք ընդունելով 2025 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՀ Սյունիքի մարզպետի N 01/07/2/06687-2025 գրությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Ապահովել 2025թ.-ի հոկտեմբերի 9-ին ժամը 10.00-ին՝ «Կապան քաղաքի Դ. Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ում անցկացվող «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև կազմակերպվող Սպարտակիադա» մարզական միջոցառման մարզային փուլին Գորիսի համայնքային փուլում առաջին տեղ գրաված՝ Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի վոլեյբոլ մարզաձևի թիմի՝ թվով 10 աշակերտի և 2 ներկայացուցչի ուղևորափոխադրումը՝ Գորիս-Կապան և հետադարձ ուղղությամբ:

2. Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 08

ք. Գորիս